ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

Վ. Հ. ՍԱՖԱՐՅԱՆ

Հայկական կլասիցիզմից ռոմանտիզմին անցման շրջանում Մկրտիչ Պեշիկթաշլյանը դարձավ ոչ միայն ռոմանտիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկը, այլև նոր ժամանակների բանաստեղծական հոսանքի իսկական արտահայտիչը։ Եվ միայն գրական ու հասարակական այդ արժանիքներն էին, որոնք հնարավորություն են տվել ժամանակի նշանավոր դեմքերից մեկին՝ Մ. Մամուրյանին, դեռևս 1866 թ. «Թուրքիո Հայոց Պերանժե» անվանելու բանաստեղծ-գործչին։ Պեշիկթաշլյանի գրական-հասարակական գործի այսպիսի գնահատականը վկայում է, թե որքան ակնառու են եղել նորի լինելությանն ու հաղթանակին նրա մատուցած ծառայությունները, որ ժամանակակիցները նրա կատարածի համարժեքը որոնել են հայ կյանքի (գրական, հասարակական) սահմաններից դուրս։ Ռեստավրացիայի ու ֆեոդալիզմի մեծագույն հակառակորդի, հանրապետական պոետի՝ Բերանժեի հետ համեմատելը ունեցել է միայն մի նպատակ՝ ցույց տալ Պեշիկթաշլյանի հասարակական ու գրական գործի արժեքը։ Այսպես էր ընկալվում ու գնահատվում Պեշիկթաշլյանը դեռևս իր կենդանության օրերին։ Հետագա տասնամյակների ընթացքում Պեշիկթաշլյանի երգն ու գործը նորոգվելով՝ մասնակցեցին հայ գրական-հասարակական շարժման շրջափուլերին, ամեն անգամ մի նոր կողմից նպաստելով գրական-հասարակական կյանքի աշխուժացմանը։ 1880—1900 թթ. նրա մի շարք ստեղծագործություններ թարգմանվեցին օտար լեզուներով (գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն), մոտ ու հարազատ հնչեցին նաև այդ լեզուներով ընթերցողներին։

* * *

Մկրտիչ Պեշիկթաշլյանը ծնվել է 1828 թ. Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում։ Մինաս Չերազի վկայությամբ, նրա հայրը՝ դերձակ Ռափայել Պեշիկթաշլյանը, մեկն է եղել այն 12000 հայերից, որոնց 1827 թ. սուլթանը աքսորեց Փոքր Ասիայի խորքերը։ Ծնողների մահից հետո Մ. Պեշիկթաշլյանը շուտով կորցնում է իր խորթ, բայց անսահման բարի մորը և քույրերին, մնալով մեն-

մենակ աշխարհի հետ։ Նախնական կրթությունը ստանում է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարաններում մինչև 1839 թ.։ 1839—1845 թթ. նա սովորում է Պադուայի (Իտալիա) Մուրադյան վարժարանում, որը նրա համար մեծ նշանակություն է ունեցել։ Այդ դպրոցը ելնում էր եվրոպական նոր մանկավարժության տեսական ու գործնական դրույթներից և սկզբունքորեն տարբեր էր մինչև այդ եղած հայ դպրոցից։ Բացի այդ, Պադուայում նրա սովորելու տարիները համընկան իտալական ժողովրդի ազատագրական պայքարի բուռն վերելքի շրջանին։ Իտալիայում ուսումնասիրած հայ մտավորական սերնդի և հատկապես Պեշիկթաշլյանի համար այդ հանգամանքը ունեցավ բախտորոշ նշանակություն։ Այսպիսի պայմաններում ուսում առած և կազմավորված երիտասարդը երբ 1845 թ. վերջերին Իտալիայից Կ. Պոլիս է վերադառնում, այստեղ արդեն գործունեության լայն ասպարեզ կար. Սերբիայի և Հունաստանի անկախություն ստանալը, բուլղարների ապստամբական շարժումները և «Թանզիմաթի» երևան գալը նպաստավոր հող էին ստեղծում հասարակական կյանքի աշխուժացման համար։

1846 թ. սկսվում է Պեշիկթաշլյանի հասարակական գործունեությունը և տևում մինչև կյանքի վերջին օրերը։ 1846 թ. Կ. Պոլսում Մ. Պեշիկթաշլյանի նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ հիմնադրվում է «Համազգյաց ընկերությունը»։ Նա եղել է նաև «Համազգյաց ընկերության» գաղափարական ղեկավարներից մեկը։ Ավելի քան հինգ տարի «Համազգյացի» շուրջը ծավալված պայքարը առիթ ու դրդապատճառ է դարձել Պեշիկթաշլյանի՝ տարբեր ժանրերի 6 ստեղծագործությունների երևան գալուն։ Երկու հատ «Խօսեցեալ ի կաճառս ընկերութեանն Համազգեաց», «Ի նորակերտ ժողովարանն Համազգեաց խօսեցեալ», մի ձոն ընկերության տարելիցի առթիվ գրած՝ «Ողջույն քեզ, ով հրաշակերտ տաճար վեհին իմաստության», ընկերության հակառակորդներին մերկացնող երկու երգիծական չափածո գործ՝ «Հանելուկ», «Մխիթարյան եմք սշակերտ» և վերջապես «Համազգյացի» պայքարի անմիջական շարունակությունը հանդիսացող «Կոռնակ» դրաման,—ահա այն վկաները, որ Պեշիկթաշլյանի անվան հետ են կապում «Համազգյացը»։ Իսկ ընկերության նախնական հավաքներից առաջինում արտասանած նրա ճառը (գուցե և հանպատրաստից) դարձել է նույն ընկերության հետագայում ձևավորված ծրագրի ու գործելակերպի առանցքը։

«Համազգյացը» շատ հաճախ ներկայացվել է սուտ որպես պոլսահայ կրոնա-դավանաբանական վեճերի հաշտեցման օջախ։ Սակայն ըստ էության այն եղել է «Նորաթուխ» հայ բուրժուազիայի գաղափարախոսների կազմակերպություն, իսկ նրա շուրջ ծավալված պայքարը բուրժուականացող հասարակախմբերի ու ավատականության միջև եղած առաջին լուրջ ընդհարումներից մեկի արտահայտությունն է մեղանում անցյալ դարի 40-ական թթ.։ Ընկերության ծրագիրը, որը ամփոփված է 10 կետերի մեջ, առաջին հայացքից լուսավորական նպատակներ է ենթադրում, որը սակայն չի խանգարում, որպեսզի «Համազգյացը» լինի հայ բուրժուազիայի գաղափարախոսների առաջին լուրջ կազմակերպությունը, իսկ նրա գաղափարական ղեկավարը՝ պոլսահայ հասարակական-առաջադիմական շարժումների առաջնորդներից մեկը։ Պեշիկթաշլյանի հասարակական գործունեության առաջին շրջանը՝ 1846—1852 թթ., ամբողջովին լցված ու հագեցված է «Համազգյացով»։ Ընկերության ծրագրում առաջադրված մի շարք կետեր հետագայում դառնում են այլ ընկերությունների

ու կազմակերպությունների առաջացման խթան ու շարժառիթ, որոնցից մեկի՝ «Թանգարան վերծանության» հիմնադրմանը իր ակտիվ մասնակցությունն է ունեցել Պեշիկթաշլյանը։

1850-ական թթ. ընթացքում Պեշիկթաշլյանի գործունեությունը առավել բազմազան է դառնում։ 1856 թ. վերջերին մի խումբ մտավորականների գլուխ անցած նա Կ. Պոլսում հիմնադրում է պոլսահայ պրոֆեսիոնալ թատրոնը, դառնալով նոր թատերական շարժման խրախուսողն ու ղեկավարը։ Եվ հայ թատրոնի ու թատերգության պատմագրությունը, իրավամբ, մեր նոր թատրոնի սկիզբն է համարում Պեշիկթաշլյանի հիմնադրած թատրոնը։ Այն դրամաները, որոնցով հենց սկզբից Մ. Պեշիկթաշլյանը ներկայացել է պոլսահայ հանդիսատեսկանին, եղել են իր «Կոռնակը», Վոլտերի «Կեսարի մահը» և Ալֆիերիի «Սավուղը»։ Իսկ սա ցույց է տալիս, որ հայ նոր թատրոնին նվիրվելուց կամ այն ստեղծելուց առաջ Պեշիկթաշլյանը տեսականորեն և գործնականապես պատրաստված է եղել դրան։ Թատերական գործին անցնելը նրա երկար մտածողության արդյունք է եղել և ոչ թե հանկարծակի ոգևորության հետևանք, ինչպես նշվել է հաճախ։

Հայ հասարակական կյանքին Պեշիկթաշլյանը մասնակցում էր ոչ միայն որպես գործիչ, այլ նաև որպես ստեղծագործող, թատերգու։ Նրա գրական գործը ամենայն իրավամբ տրամաբանական շարունակությունն է իր հասարակական գործունեության, հասարակական հետաքրքրությունների արտահայտությունը։

Պեշիկթաշլյանի դրամաները՝ ինքնուրույն և թարգմանական (թվով ինը) մեզ այսօր մնում են իբրև անցյալ դարի 50-ական թթ. մեր թատերգության լավագույն օրինակները, որոնցով և սկսվում է հայ նոր թատերգության պատմությունը։ 1850 թ. սկզբին գրելով «Կոռնակ» դրաման, որի առաջին բեմադրությունը մեծ խանդավառություն առաջացրեց պոլսահայ մտավորականության շրջանում, Պեշիկթաշլյանը արդեն շատ որոշակիորեն ցույց տվեց նոր թատերգության գեղագիտական և հասարակական հետաքրքրությունները։ Այդ դրամայով, ինչպես նաև մյուս գործերով, չնայած կլասիցիզմի տարրերի առկայության, Պեշիկթաշլյանը ավելի որոշակի է ներկայացնում գրականության և իրականության փոխհարաբերության հարցը, մեկը մյուսին ծառայեցնելու խնդիրը։ Պեշիկթաշլյանի առաջին իսկ դրաման՝ «Կոռնակը», որը հայ նոր թատերգության առաջնեկն է, արդեն որոշակի դարձրեց Մխիթարյանների կլասիցիստական թատերգության հնօրյա ու հնացած լինելը, թեև գրության սկզբունքներով հարազատություն ուներ մխիթարյան կլասիցիզմի նշանավոր դեմքի ու տեսաբանի՝ Պետրոս Մինասյանի «Խոսրով Մեծ» ողբերգության հետ։ Պեշիկթաշլյանը «Կոռնակում» և իր մյուս դրամաներում, չնայած դրանց պատմական բնույթին, ոչ միայն արծարծում էր առօրյա հարցեր ու խնդիրներ, առավել ևս ժամանակի հուզող պահանջները, այլև հստակ դարձնում պատմությունը ժամանակի հարցերի տեսանկյունից օգտագործելու խնդիրը։ Եթե հների (Ջախջախյան, Պ. Մինասյան), Ա. Հեքիմյանի, և ժամանակակիցներից շատերի համար պատմությունը, պատմական թեման նպատակ էր, Պեշիկթաշլյանի համար պատմության նյութը, պատմական անունները դարձան միջոցներ, որոնց օգնությամբ ավելի դյուրին էր օրվա հրատապ հարցը հանդիսականին հասցնելը։

Պեշիկթաշլյանը հայ իրականության մեջ առաջինն էր, որ պատմությանը ուղղակի մոտեցում ցուցաբերեց։ Այս հանգամանքը ուներ գեղագիտական ու հա-

սորակական հիմնավորում ու շարժառիթ և ըստ էության ռոմանտիկական գեղագիտության անկյունաքարերից մեկն էր նաև։ Այդպիսի սկզբունքով է նա ստեղծել «Կոռնակ», «Արշակ», «Վահե», «Վահան» պատմական դրամաները։ Այդպիսի ազատ միտումով նա թարգմանում-փոխադրում էր իտալական և ֆրանսիական գրականության լավագույն օրինակները՝ Վիտորիո Ալֆիերիի «Սավուդ», «Բրուտոս Ա», Վոլտերի «Կեսարի մահը» դրամաները։ Դրանք սովորական թարգմանություններ չէին այժմյան հասկացողությամբ, այլ յուրատեսակ թարգմանություն-փոխադրությունների ինքնատիպ օրինակներ, որոնք շատ ակտիվորեն ազդում էին հայ գրական-հասարակական կյանքի վրա և ավելի շատ խթանեցին թատերական կյանքի ստեղծմանը, քան ժամանակի երկրորդական գրողների ինքնուրույն և թարգմանական պիեսները։ Բացի դրամաներից, Պեշիկթաշլյանի գրչին են պատկանում նաև երկու կատակերգություններ («Կատակերգութիւն երից քաջաց», «Կատակերգութիւն ավազակաց»), որոնք իրենց կենցաղային ու սոցիալական արժանիքներից զատ հետաքրքիր են որպես հայ առաջին երաժշտական կատակերգության օրինակներ և որոնցով Պեշիկթաշլյանը հիշյալ ժանրի մեջ էլ առաջնության իրավունք է նվաճել։

Պեշիկթաշլյանի հասարակական և գրական գործունեության կարևոր ասպարեզներից մեկն էլ մանկավարժությունն է, ուր նույնպես փայլատակեց (առանց դադարի) Պեշիկթաշլյանի բազմաշող հոգու բոցը։ Պեշիկթաշլյանը մանկավարժությամբ զբաղվել է շուրջ քսան տարի։ Եվ, ինչպես նկատել է Ա. Զոպանյանը, նա իր մանկավարժությամբ բարձրացրել է ուսուցչի և մտավորականի դիրքը հայոց մեջ։ Երկար տարիներ հայերեն և ֆրանսերեն է դասավանդել Կ. Պոլսի Լուսավորչյան, Թարգմանչաց, Հռիփսիմյանց վարժարաններում, ինչպես նաև մի շարք մեծահարուստ ընտանիքներում։ Նրա մանկավարժական գործունեության արգասիքներից մեկն էլ այն է, որ հայերենից ու հայկական իրականությունից կտրված Սրբուհի Տյուսաբը իր ուսուցչի ազդեցությամբ դարձավ արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից մեկը։

Պեշիկթաշլյան-մանկավարժը նոր նպատակ ու խնդիրներ է առաջադրել հայ դպրոցին։ Մանկավարժությունը նրա համար եղել է համազգային առաջադիմական շարժման կարևոր օղակներից մեկը։ Միայն դրանով կարելի է լինում բացատրել ու հասկանալ այն սերն ու նվիրվածությունը, որ նա ցուցաբերել է դպրոցի և մանկավարժության նկատմամբ։ Ուսուցչություն է արել՝ երևելով դարի առաջադիմական գաղափարներից և այն տեսական հարցադրումներից, որ առաջ էր քաշում դարթոնքի մտավորական սերունդը (Հիսարյան, Զորայան և ուրիշներ)։ Պեշիկթաշլյանի բարոյական մարդկային չքնաղ ձիրքերը, զումարվելով նոր դպրոցի տեսական դրույթներին ու նորույթներին, ակնառու արդյունքներ են տվել հայ մանկավարժության պատմության մեջ։

Պեշիկթաշլյան-երաժիշտը ևս իրավամբ տեղ պիտի ունենա հայ նոր երգի ու երաժշտության պատմության մեջ։ Իտալիայից նոր-նոր Կ. Պոլիս վերադարձած գործիչը զգաց հայ ազգային երգի պակասը և այդ ուղղությամբ կատարեց նշանակալի աշխատանքներ։ Արագորեն կազմավորվող հայ քաղաքային կյանքին ու զարթոնքի սերնդին այլևս չէին բավարարում աշուղական տաղերը, շարքիներն ու մանիները։ Որպես ազգ ձևավորվող ժողովրդին նոր երգ էր պետք։ Հայ երգն ու երաժշտությունը 1850—1860-ական թթ. լուրջ բեկում ու տեղաշարժ ապրեցին։ Այդ ուղղությամբ երաժիշտներից բացի մեծ դեր էին կատարում նաև բանաստեղծներն ու հասարակական գործիչները։ 1856 թ. լույս տես-

սավ Ռ. Պատկանյանի «Ազգային երգարան հայոց» ժողովածուն, որը նպատակ ուներ նպաստել հայ նոր երգի առաջացմանը։ Այդ ժողովածուն անմիջապես արժանացավ Ս. Նալբանդյանի ուշադրությանը և բարձր գնահատականին։ Մեծ հեղափոխական-դեմոկրատը այդտեղ գտավ շատ երգեր, որոնք «հայոց հոգվո և սրտի պահանջները» բավարարող և ժամանակակից երգեր էին, որոնց շնորհիվ այդ երգարանը Նալբանդյանը կոչեց «մի օրինավոր հայոց երգարան»։ Հայ երգին առաջադրվող պահանջները կատարելու համար Պեշիկթաշլյանը գրում և հորինում է բազմաթիվ երգեր։ Այդ ուղղությամբ կատարած քայլերից մեկն է 1849 թ. Ղ. Ալիշանի «Բա՜մ-փորոտան» երգի համար երաժշտություն հորինելը, իհարկե, ոչ այն, որը այսօր երգվում է։ Պեշիկթաշլյանը ակտիվորեն մասնակցել է 1862 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Երաժշտական ընկերության» և երաժշտական ամսագրերի աշխատանքներին, ընկերության անդամների՝ Տիգրան Չուխաջյանի և Գաբրիել Երանյանի հետ միասին։ Բացի այն, որ գրում ու հորինում էր երգեր, որոնք հաճախ խմբագրվում էին Պոլսի նշանավոր երաժիշտների կողմից, նա իր պիեսների բեմադրության ժամանակ օգտագործում էր Վերդիի, Դոնիցետտիի ստեղծագործություններից։ Պեշիկթաշլյանի մի շարք բանաստեղծությունների ձայնագրությունները («Գարուն», «Եղբայր եմք մեք», «Մահ քաջորդվույն») ոչ միայն մեծ դեր կատարեցին հայ նոր երգի զարգացման ճանապարհին, այլև այսօր էլ մնում են մեր լավագույն երգերի ցանկում։

Պեշիկթաշլյանի հասարակական գործունեության էջերից է 1858 թ. վերջերին Մուրադյան-Ռափայելյան վարժարանների նախկին սաների միության ստեղծումը։ Ընկերությունը եղել է «Համազգյացի» հետևորդ մի հաստատություն կամ նրա հեռավոր արձագանքներից մեկը։ Ընկերության ոգին ու գլխավոր դեմքը Մ. Պեշիկթաշլյանն էր, որի մահից հետո շուտով դադարել է ընկերությունը։ Պեշիկթաշլյանը ակտիվորեն մասնակցել և ղեկավար դեր է կատարել 1860 թ. օգոստոսին Կ. Պոլսում հիմնադրված «Անձնվեր ընկերության» աշխատանքներին, որոնց նպատակն էր ձրի ուսում և գրագիտություն տալ Պոլսում եղած գավառահայ պանդուխտներին։ 1862 թ. Զեյթունի նշանավոր ապստամբության ժամանակ ընկերությունը փոխեց իր ծրագիրը և նրա միակ նպատակն էր օգնել հերոս լեռնականներին։

Պեշիկթաշլյանի նվիրվածությունը հայ ազգային-ազատագրական շարժմանը առավել ամբողջությամբ դրսևորվում է 1860-ական թթ.։ Այդ տարիների պոլսահայ կյանքի ամենաակնառու երևույթներից մեկը եղել է «Բարեգործական ընկերությունը», որը հիմնադրվել է 1860 թ. սեպտեմբերին։ «Բարեգործականի» հետ լուրջ հույսեր էր կապում, օգնում նրա աշխատանքներին Միքայել Նալբանդյանը։ «Բարեգործականի» մի թևը՝ Նորատունկյան, Մերենց, Թագվորյան, Պեշիկթաշլյան, լրջորեն մտահոգված է եղել Զեյթունի, Կիլիկիայի հարցով և 1862 թ. դեպքերից շատ առաջ գործնական կապեր է ունեցել դեյբունցիների հետ։

Այսպիսով, եթե Պեշիկթաշլյանի հասարակական գործունեությունը սկզբնական շրջանում սկսվում է լուսավորական միտումով, ապա հաջորդ շրջանում նա արդեն ազգային-ազատագրական պայքարի առաջագծում է, այդ պայքարի նշանավոր դեմքերի շարքում։

Պեշիկթաշլյանի հասարակական գործն ունեցել է նաև անկատար բաժիններ, որոնք ինչ-ինչ պատճառներով մնացել են ծրագիր ու նպատակ միայն։ Այդ անկատար հղացումներից մեկը սեփական պարբերականի հրատարակությունն

է։ Նա Ս. Հեքիմյանի և Կ. Գարագաշյանի հետ ծրագրել է «Հույս» անունով լրագրի հրատարակման գործը, որը ցավոք չի իրագործվել։

* * *

Այս ամենով հանդերձ, Պեշիկթաշլյանը առաջին հերթին բանաստեղծ էր, ամենաթրթռուն հոգին անցյալ դարի 50—60-ական թթ. հայ բանաստեղծության անդաստանում։ Պեշիկթաշլյան բանաստեղծն է, որը բարձրանում է և ստվերում ժամանակի չափածոյից շատ բան։

Պեշիկթաշլյանի բանաստեղծական վաստակը ունի չորս փուլ։ Դրանցից առաջինը 1845—1850 թթ. շրջանն է, երբ Մխիթարյան դպրոցներում բանաստեղծական նախափորձեր անող Պեշիկթաշլյանը ամբողջովին իր վարդապետ ուսուցիչների ազդեցությամբ գրում է երգեր՝ ցույց տալիս Մխիթարյան պոեզիայի նյութի և պոետիկայի փայլուն իմացություն («Նուագ ի մահն Յիսուսի», «Ի Նահատակութիւն Վարդանանց», «Բացան դրունք նոր տարւոյս», «Յոնտրութիւն Վ. Հ. Գէորգայ վարդապետի արբայ Մխիթարեան ուխտին»)։ Այնուհետև նույն տարիներին ունենում է որոնումներ, անբավարարվածություն, որից նրան ելք պիտի նախանշի Ղ. Ալիշանի «Երգք նահապետի» շարքը։ Որոնումները վերջանում են 1850 թ. շեմին։

1850-ական թթ. ընթացքում Պեշիկթաշլյանը ստեղծում է այդ տասնամյակի հայ պոեզիայի ընտիր էջերը՝ «Եղբայր եմք մեք», «Գարուն» բանաստեղծությունները, որոնք մի նոր որակ էին հայ պոեզիայի պատմության մեջ։ «Եղբայր Եմ՛ք մեք» հիմնով Պեշիկթաշլյանը պատմության հեռավոր ու մոտավոր քառուղիներում երկար ժամանակ թափառած հայ մուսային, որը տակավին հին-հին դարուց հիշատակներ էր որոնում Հրազդանի, Արաքսի կամ Վանա ծովակի ափերին, կոչում էր գործնական հայրենասիրության, հայրենաշեն գործի.

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր եմք մեք,
Որ մրրրկավ Լիմք զատված։
Բաղդին ամեն ոխ զանանենք
Ի մի համբուր ցրվին ի բաց։
Ընդ սատեղոք ի՞նչ կա սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Այս՝ իրոք, մի նոր որակ էր ոչ միայն հասարակական, այլև գեղագիտական առումով։

«Գարուն» բանաստեղծությամբ Պեշիկթաշլյանը պատմողական, արտաքին նկարագրական հայրենասիրությունը դարձրեց մարդկային կյանքի իմաստ։ Այստեղ հայրենասիրությունն արդեն այն խոսքը չէ, որը ասում էին բոլորը, հաճախ սովորության ուժով։ Գեղարվեստական առումով նրա խոսքը ունի նոր կշիռ ու արժեք, այն դալիս է հոգու խորքերից։ Այստեղ շատ ավելի հուզաթաթավ է մարդկային կյանքի, ապրումի հայրենասիրական իմաստն ու էությունը։

Թեպետ թռչնիկն ու հովն հայոց
Ավերակաց շրջին վերա,
Թեպետ պղտոր վրտակն հայոց
Նոհիներու մեջ կ՚սողա,—

Նոքա հառաչք են հայրենյաց,
Նոքա շերթան սրտես ի բաց:

Սա նոր ժամանակների գեղարվեստական, քնարական դրաման էր և Պեշիկթաշլյանի ու իր սերնդի հավատամքը, ապրելու և լինելու իմաստը։ Պեշիկթաշլյանի համար կյանքի էությունն ու նպատակ է եղել գործուն հայրենասիրությունը, հայրենանվեր կյանքը, որի շարժառիթն ու դրդապատճառն է հայրենիքի անապատ վիճակը։

Զեյթունյան տարիներին (1860—1863 թթ.) Պեշիկթաշլյանը ստեղծում է նոր ժամանակների հայ հերոսերգության լավագույն օրինակներ («Հայ քաջորդին», «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին»)։ Հյուգոյի «Տղան» («Թուրքերն անցան այս տեղով») բանաստեղծությունից ներշնչվելով, Պեշիկթաշլյանը փոխադրում է այն և ստեղծում նրան համարժեք այնպիսի մի գործ, որը և՛ որպես թարգմանություն, և՛ որպես ինքնուրույն ստեղծագործություն պատիվ է բերում հայ հեղինակին։ Զեյթունյան երգաշարով Պեշիկթաշլյանի մոտ բացահայտվում է նրա բաղմաշող հոգու մի կողմը ևս՝ հերոսական նկարագիրը։ Այդ շարքը ցույց է տալիս, որ այնչան էլ անխռով հոգի չի եղել Պեշիկթաշլյանը, և իզուր են նրան մեր բանաստեղծներն ու բանասերները ներկայացրել որպես մի հեզ ու աղավնաբարո մարդ՝ զուրկ հերոսական գծերից։ Հայ մահամերձ պատանու խոսքը մորը նոր ժամանակների հերոսերգության լավագույն օրինակն էր, որը հեղինակի վարպետության շնորհիվ ընթերցողին ներկայացավ հերոսականի և քնարականի շաղախով։ Այդ շարքով Պեշիկթաշլյանը ստեղծեց Զեյթունի հերոսական անցուդարձերին նվիրված, գաղափարական և գեղագիտական առումով հիանալի գործեր հայ գրականության պատմության մեջ։

Հայ նոր պոեզիայի պատմության մեջ մի նոր էջ էր 1863—68 թթ. Պեշիկթաշլյանի ստեղծած բանաստեղծությունների շարքը, որոնց շնորհիվ հայ ռոմանտիկական քնարերգությունը ձեռք է բերում իսկական գեղարվեստական նկարագիր։ Այս շարքը մեղանում ներկայացվել է որպես կենսագրական, անձնական դիպվածի արտահայտություն, որով և քնարական հերոսի ապրումները դրկվել են հասարակական հիմքից ու դրդապատճառից։ Եթե այդ երգերը միայն անհաջող սիրավեպի և կյանքի վերջին շրջանում բաստկացող հիվանդության հետևանք լինեին, հազիվ թե կարողանային այնքան ամբողջությամբ ներկայացնել մի ողջ սերնդի այն մեծագույն տվայտանքները, որոնք նա ապրեց հուսալքումի և նահանջի տարիներին։

Հայտնի է, որ 1860-ական թթ. հայ ժողովրդի երկու հատվածի համար էլ սկսվեց տեղատվության մի շրջան։ Արևմտահայ մտավորականությունը, որն այնքան ոգևորված էր ազգային սահմանադրության պատրանքով, Զեյթունի հերոսական անցուդարձերով և Կիլիկիան անկախ ազգային մարդ տեսնելու հույսերով, հուսախաբ եղավ։ Իսկ Պեշիկթաշլյան գործիչն ու բանաստեղծը այդ շարժման առաջին գծում էր միշտ, այդ շարժման սրտահայտիչը։ Մ. Նալբանդյանի ձերբակալումը հայ ազատագրական շարժումը զրկել էր լավագույն ղեկավարից, լռեց Ս. Շահազիզի քնարը, իր գործերը Պետերբուրգում ավարտած Համարելով գավառական քաղաք՝ Ն. Նախիջևան վերադարձավ Ռ. Պատկանյանը, որի քնարը մի ժամանակ նույնպես դադարեց։ Նույնպիսի մռայլ տիրեց և պոլսահայ կյանքում. այդ են վկայում Մ. Մամուրյանի «Հայկական նամականի»

հրապարակախոսական երկի շատուշատ էջեր, Դր. Օտյանի նամակները և այլն։ Ահա այս տեղատվության արտահայտությունը, քնարական ձևակերպությունն է։ Պեշիկթաշլյանի վերջին շրջանի հուսահատական երգերը։

Պեշիկթաշլյանը, ի տարբերություն նախորդների ու ժամանակակիցների, իր քնարական բանաստեղծությունից դուրս վանեց պատմողական տարրը, խոսել սկսեց անհատի անունից, նրա հոգուց ու սրտից, ներկայացրեց ազգային դրաման անհատի միջոցով՝ բարձր բանաստեղծականությամբ։ Օրեռն ու ժամանակը, որոնք հարց ու պատասխանի միջոցով էին բացահայտված այլ բանաստեղծների գործերում, Պեշիկթաշլյանը ցուցադրեց խոր ու բյուրեղյա ապրումների տեսքով, ապրումներ, որոնց հիմքում ցոլանում էր ժամանակը։ Հասարակական վիշտը բարձր բանաստեղծական հնարներով նա արտացոլեց անձնական ապրումների տեսքով։ Նրա քնարական խոսքը որոշակիորեն սահմանագատվեց ժամանակի քիչ թե շատ զգացմունքային տարրեր պարունակող, սենտիմենտալիզմի հովերով գրված սիրերգություններից։

Իր ողջ բանաստեղծական վաստակով և հատկապես վերջին շրջանի երգերով Պեշիկթաշլյանը հայ պոեզիայի մեջ հայտնաբերեց մի նոր քնարական ընկալում և դարձավ այդ ժանրի ռահվիրան մեղանում։